

**Հարցաշար 2023 թ.**  
**«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի մարզային փուլ**  
**9-րդ դասարան - 120 րոպե**

**N 1-8**  
**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

**1. Եկեղեցու Աստյանի ո՞ր կողմում է գտնվում մկրտության ավազանը. (0,5 միավոր)**

- |                |              |
|----------------|--------------|
| 1) Հյուսիսային | 2) Հարավային |
| 3) Արևելյան    | 4) Արևմտյան  |

**2. Ովքե՞ր օրթոդոքս ժողովուրդներից չեն. (0,5 միավոր)**

- |               |                 |
|---------------|-----------------|
| 1) բուլղարներ | 2) իտալացիներ   |
| 3) սերբեր     | 4) ռումինացիներ |

**3. Ո՞ր լեռն է բարձրանում Ս. Մարիամ Աստվածածինը, երբ Գաբրիել հրեշտակը հայտնում է նրան երկրային կյանքի ավարտի մասին. (0,5 միավոր)**

- |            |             |
|------------|-------------|
| 1) Արարատ  | 2) Վարազա   |
| 3) Գողգոթա | 4) Ձիթենյաց |

**4. Ի՞նչն է դառնում Աստծո և մարդու միջև ուխտի նշանը, երբ ջրհեղեղից հետո Աստված օրհնում է Նոյին ու նրա որդիներին. (0,5 միավոր)**

- |                |                |
|----------------|----------------|
| 1) Նոյի տապանը | 2) ծիածանը     |
| 3) աղավնին     | 4) Արարատ լեռը |

**5. Մինչմուսուլմանական պարսկական կրոնում գերագույն աստվածը ո՞ւմ է ընտրում որպես միջնորդ երկնքի և երկրի միջև. (0,5 միավոր)**

- |            |            |
|------------|------------|
| 1) Զրադաշտ | 2) Ահրիման |
| 3) Ինդրա   | 4) Բրահմա  |

**6. Ո՞ր իրադարձության տարեթիվն է համարվում մուսուլմանական թվականության սկիզբը. (0,5 միավոր)**

- 1) Մուհամմադի ծնունդը
- 2) Մուհամմադի՝ իրեն մարգարե հռչակելը
- 3) Մուհամմադի փախուստը Յասրիբ քաղաք
- 4) Մուհամմադի՝ իր հայրենի քաղաք Մեքքայի հպատակեցումը:

7. Ե՞րբ է Աբգար Դպիրը Վենետիկում տպագրում «Օրցույց» և «Սաղմոսարան» գրքերը. (0,5 միավոր)

- |            |            |
|------------|------------|
| 1) 1604 թ. | 2) 1580 թ. |
| 3) 1565 թ. | 4) 1512 թ. |

8. Ո՞ր հայրապետի մահով է 1203 թ. ավարտվում Պահլավունիների տոհմի կաթողիկոսական իշխանությունը. (0,5 միավոր)

- |              |                 |
|--------------|-----------------|
| 1) Գրիգոր Զ. | 2) Հովհաննես Զ. |
| 3) Գրիգոր Բ. | 4) Ներսես Դ.    |

**N 9-12**

**Կառուցված պատասխանով առաջադրանքներ**

9. Գևորգ Բ. Գառնեցին, տեղից տեղ փոխադրվելով, ի վերջո մահկանացուն կնքում է Վասպուրականում և թաղվում Վանի մոտ գտնվող \_\_\_\_\_ում: (1 միավոր)

10. Ժողովրդական մտածողության մեջ Ս. Սարգիսը չի գոհվել, այլ «\_\_\_\_\_» է դարձել: (1 միավոր)

11. 1243 թ. \_\_\_\_\_ում հրավիրված ժողովն ընդունում է 24 կանոններ: (1 միավոր)

12. 719 թ. \_\_\_\_\_ կաթողիկոսի նախաձեռնությամբ Դվինում եկեղեցական ժողով է գումարվում, որտեղ հատուկ կանոն է ընդունվում պավլիկյանների դեմ: (1 միավոր)

**N 13-14**

**Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից**

13. Կաթողիկոսի անունը համապատասխանեցնել իրադարձությանը: (1 միավոր)

1. Հակոբ Բ. Անավարզեցի
2. Մեսրոպ Ա. Արտագեցի
3. Գրիգոր Դ. Տղա
4. Գրիգոր Գ. Պահլավունի

1	
2	
3	
4	

ա. 1178 թ. հրավիրում է Հռոմկլայի համահայկական Եկեղեցական ժողովը:

բ. 1361 թ. Սիս քաղաքում հրավիրում է եկեղեցական ժողով, որը չեղյալ է հայտարարում Սսի և Ադանայի ժողովների ընդունած որոշումները:

գ. Հայրապետական աթոռը տեղափոխում է Ծոփք, որտեղ այն մնում է 33 տարի:

դ. Հիմնում է Բջնիի եպիսկոպոսական աթոռը:

ե. Հատուկ կոնդակով միարարներին արգելում է լատինական ծեսով կատարել պատարագ, մկրտություն, հայերին դարձնել հռոմեադավան և այլն:

14. Ժողովի անվանումը համապատասխանեցնել հրավիրման տարեթվին:

(1 միավոր)

- 1. Կ. Պոլսի Երկրորդ տիեզերական ժողով ա. 554 թ.
- 2. Դվինի երկրորդ եկեղեցական ժողով բ. 444 թ.
- 3. Շահապիվանի եկեղեցական ժողով գ. 381 թ.
- 4. Հայոց առաջին ազգային-եկեղեցական ժողով դ. 431 թ.  
ե. 354 թ.

1	
2	
3	
4	

N 15-16

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը՝ 5 փաստից

15. Իրադարձությունները դասավորել ըստ հաջորդականության:

(1 միավոր)

- ա. Անիում կաթողիկոս է ձեռնադրվում Պետրոս Ա. Գետադարձը:
- բ. Կաթողիկոս է ձեռնադրվում Մաշտոց Ա. Եղիվարդեցին:
- գ. Բարսեղը (Բարսեղ Ա.) օծվում է Վկայասերին արքունակից կաթողիկոս:
- դ. Գագիկ Կարսեցին Ծամնդավում գումարում է ժողով:
- ե. Ս. Գրիգոր Տաթևացու ջանքերով Աղթամարի կաթողիկոսությունը դառնում է Ամենայն Հայոց կաթողիկոսությանը ենթակա թեմ:

1	
2	
3	
4	
5	

16. Հինկտակարանյան պատմությունները դասավորել ըստ հաջորդականության:

(1 միավոր)

- ա. Նոյի կողմից տապանի կառուցում:
- բ. Դավիթ թագավորի կողմից Երուսաղեմի՝ երկրի մայրաքաղաք դարձնել:
- գ. Ադամի և Եվայի արտաքսում դրախտից:
- դ. Արգելված պտղի ճաշակում:
- ե. Բաբելոնյան գերություն:

1	
2	
3	
4	
5	

№ 17

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

Որպես երազ լուսեղեն,  
Ձյունապայծառ ու շողուն՝  
Դո՛ւ, անխորտակ ապավեն  
Հրաճարակ մեր հոգուն ...

1) Ո՞ր բանաստեղծն է մեջբերված հատվածի հեղինակը:

(1 միավոր)

2) Ո՞ր լեռանն է նվիրված բանաստեղծությունը:

(1 միավոր)

N 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ:

(2 x 1 = 2 միավոր)

- 1) Թաբոր լեռան գագաթին Աստված երևում է Մովսեսին և հայտնում Իր Տաք պատվիրանները:
- 2) Մովսեսի մահից հետո իսրայելացիներին հաջողվում է գրավել իրենց նախնիների երկիրը՝ Քանանը և բնակվել այնտեղ:
- 3) Միքայել հրեշտակը հայտնում է Մարիամին, որ պետք է որդի ունենա, և նրա անունը պետք է Հիսուս դնի:
- 4) Աստված Աբրահամին և Սառային ծեր տարիքում զավակ է պարգևում, և նրա անունը դնում են Մարիամ:
- 5) Վերնատանը Հիսուս օրհնում է սեղանը և աշակերտներին ասում, որ սա Վերջին Չատիկի ընթրիքն է, որ անցկացնում է նրանց հետ:

--	--

19. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ:

(2 x 1 = 2 միավոր)

- 1) Ռուս-պարսկական պատերազմից հետո գեներալ Ի. Պասկևիչն օգնում է Հայաստանի ինքնավարության համար պայքարող հայ գործիչներին:
- 2) XIX դարի սկզբներին ռուսական կառավարությունը ջանք չի իննայում, որպեսզի Էջմիածնի գահին բազմեն ռուսական կողմնորոշում ունեցող եկեղեցականներ:
- 3) Հովհաննես Ը. Կարբեցի կաթողիկոսի օրոք Հայաստան է ժամանում Ռուսաստանի կայսր Նիկոլայ I-ը:
- 4) Ներսես Ե. Աշտարակեցուն չի հաջողվում կարգավորել հարաբերությունները Կ. Պոլսի պատրիարքության հետ:
- 5) 1836 թ. մարտի 11-ին Նիկոլայ I-ը հատուկ հրամանագրով հաստատում է Հայոց եկեղեցու կանոնադրությունը:

--	--

20. Շարադրանք:

(2 միավոր)

Ներկայացրե՛ք Հայ բողոքական եկեղեցու առաջացումը: